

## ՄԱՅՐ ԱԹՈՌ

### Վեհափառ Կաթողիկոսի մեկնումն Թիֆլիս

Նոյեմբերի 22-ին Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց մեկնել Թիֆլիս: Առաւօտեան ժամը 10-ին վեհարանի առաջ սպասում էին ամբողջ միաբանութիւնը, ձեմարանի աշակերտներն իրենց Տեսչի և ուսուցիչներին գլխաւորութեամբ՝ բարի ճանապարհ մաղթելու Վեհափառ Հայրապետին: Ժամը 10-ից քիչ անց Վեհափառն բարեհաճեց իջնել վեհարանից և միաբանութեան ուղեկցութեամբ մտաւ Տաճարը՝ որտեղ Իջման ս. Սեղանի առաջ ծնկաչոք աղօթեց և ապա Տաճարից դուրս գալով և Տրդատի դրան կողմով անցնելով՝ մտաւ հայրապետական յատուկ փակ կառքը, օրհնելով միաբանութեան և այնտեղ ժողովուած խուն ժողովրդեան: Վեհափառին մինչև կայարան գնացել էին ճանապարհելու Տ. Յուսիկ արքեպիսկոպոսը, Տ. Տ. Եփրեմ և Մատթէոս եպիսկոպոսները ու Տ. Բարդէն վարդապետը, իսկ հայրապետական խաչ ու զաւաղանը մինչև կայարան կրումէին Տ. Վրթանէս վարդապետն ու Տ. Երուանդ արքեպան: Թիֆլիսից յատկապէս Վեհափառի համար ուղարկուած էր սալոն-վագոն: Ուղեկցելու համար Թիֆլիսից եկել էր առանձին պատգամաւորութիւն՝ Սիրովրէ աղա Կիւլալենկեան, ինժեներ Ներսէս Արէլեան և երդուեալ հաւատարմատար Գէորգ Սատիսեան: Նոյեմբերի 22-ին երեկոյեան դնացքով Վեհափառն ճանապարհուեց Թիֆլիս ուղեկցութեամբ Տ. Տ. Մեսրոպ և Բագրատ եպիսկոպոսները, Արիստակէս վարդապետի և Թիֆլիսից եկած պատգամաւորները: Երկուշաբթի նոյեմբերի 24-ին առաւօտեան ժամը 9-ին Վեհափառն ժամանել է Թիֆլիս: Կայարանում Վեհափառ Հայրապետին զիմաւորել են Կովկասի Տ. Փոխարքայի, Վրաստանի էկզարխի, նահանգապետի, հայ հասարակութեան զանազան հիմնարկութիւնների և հոգևորականութեան ներկայացուցիչները և բազմամարդ ժողովուրդ: Վեհափառին սալոն-վագոնում ողջունել են Փոխարքայի ներկայացուցիչ գեներալ Թամամչև, նահանգապետի ներկայացուցիչը, քաղաքագլուխ Ա. Սատիսեան, քաղաքային վարչութեան անդամները և ոստիկանապետը:

Բազմաթիւ ժողովրդի անվերջ կեցցէներով Վեհափառն ցած իջաւ վագոնից և շրջապատուած ուղեկիցներով և ներկայացուցիչներով անցաւ կայարանում յատուկ պատրաստուած զահլիճը:

Այսանդ Նորին Մըրութեան ողջունեցին վրաստանի էկզարխի, հայ հոգևորականութեան և հիմնարկութիւնների ներկայացուցիչները: Հայոց Բարեկործական Ընկերութեան նախագահ մեծարգոյ Ս. Յարութիւնեանը դիմեց Վեհափառին հետևեալ ճառով:

Վեհափառ Տէր,

Թիֆլիսի հայ հասարակութիւնն ու հայկական հաստատութիւնների ներկայացուցիչները ողջունում են Ձեր գալուստը և իրենց սրգիական սիրոյ և յարգանքների զգացմունքները յայսմում Ձեզ:

Վեհափառ Տէր, ուրախալի է մեզ համար Ձեր գալուստը, որ ներկայ դէպքում արտասովոր նշանակութիւն ունի:

Հայ ժողովուրդը մեծ անհամբերութեամբ էր սպասում Ձեր գալու բարի լուրին և նրա ցանկութիւնը կատարուեց:

Դուք, Ձերդ Ս. Օծութիւնը, բազմ կունենաք ողջունելու հայ ազգի և Ձեր կողմից Ողորմած Կայսրի բարի գալուստը:

Կովկասը ու նրա բազմալեզու, բազմակրօն ազգութիւնները հրճուանքի մէջ են մեր Սիրելի Կայսրի գալուստի: Դուք կը լինէք Թարգման այն անկեղծ սիրոյ ու անձուիրութեան զգացմունքների, որով ստգորուած է ամբողջ հայ ազգը դէպի Կայսրը և նրա յաղթական զօրքը:

Հայնատարած Մեծ Ռուսաստանում, թէ Ռուսաստանի սահմաններից դուրս, այս պատմական մոմենտում Դուք Թարգման կը լինէք և հայ ազգի իսկական իղձերի և պատմական ցաւերի:

Թոյլ սուէք, Վեհափառ Տէր, նորից ողջունել Ձեր գալուստը, ասելով «Կեցցէ Ամենայն Հայոց Կաթողիկոսը»:

Ս. Յարութիւնեանի ճառին Կաթողիկոսը պատասխանեց, ասելով մօտաւորապէս հետևեալը. «Շնորհակալ եմ ըստրիցդ: Բազմաշարժար հայ ժողովրդի վիճակի բարելաւման համար շատ աշխատանքներ են լինում: Ինչպէս հայ ժողովուրդը, նոյնպէս և ես յոյս ունեմ, որ ապագան լաւ կը լինի: Մեր սիրելի Թագաւոր Կայսեր հովանաւորութիւնը միշտ կայ հայ ազգի վրայ: Ասելով թէ՛ սիրտ թա-

գաւորի՝ ի ձեռս Աստուծոյ է: Եւ յոյս ունեմ, որ Թագաւոր Կայսրի Բարձրագոյն հովանաւորութեամբ և զաշնակիցների աջակցութեամբ կիրականանան բոլորիս յոյսերը և տաճկահայ ժողովուրդը հնարաւորութիւն կստանայ ապրել ազատ պայմաններում: Թող բարեգութ Աստուածը յաջողութեամբ պսակէ մեր բոլոր ջանքերը»:

Վեհափառի խօսքից յետոյ լսուեց խանդավառ կեցցէներ բոլոր ներկայ եզոզների կողմից:

Այնուհետև Վեհափառն նստելով քառաձի կառքը, Միխայլովսկի մեծ պողոտայով, Վարանցովի արձանի մօտով, Մադաթեան և Վանքի փողոցներով դիմեց դէպի Վանքի աւագ եկեղեցին: Ամբողջ ճանապարհին Վեհափառին ուղեկցել է անթիւ բազմամարդ ժողովուրդը մեծ ոգևորութեամբ և դէպի իրենց սիրելի Հայրապետը լցուած զգացմունքներով: Այս ամենը Վեհափառի վրայ այնպէս ազդել էր, որ Հոգևոր Տէրը լաւ իմանալով իւր սիրեցեալ հօտի այդ բուն զգացմունքների նշանակութիւնը սոյն պատմական օրերին՝ խորապէս ազդուած տրտպանուեալ էր:

Մագաթեան փողոցում, Ալէքսանդրեան այգու մօտ, զգեստաւորուած սպասուեալ էին քաղաքի հոգևորականները թեմի առաջնորդ Տ. Մեսրոպ եպիսկոպոսի գլխաւորութեամբ և կոյսերը— մայրապետ Թայրեանի գլխաւորութեամբ: Այստեղ Վեհափառն ցած իջնելով կառքից՝ ամպնովանու տակ մտաւ և շրջապատուած հոգևորականներով ու ներկայացուցիչներով բոլոր դպրոցների աշակերտութեան շարքերի միջով դիմեց դէպի Վանքի մայր եկեղեցին: Ամեն տեղ օղբ թնդում էր ուրախ և զգացուած կեցցէներով: Վանքի եկեղեցում Վեհափառն ուղղել է ժողովրդին հետևեալ խօսքը.

«Սիրելի ժողովուրդ, չափազանց յուզում է ինձ հայ հասարակութեան ցոյց տուած այս սրտազին ընդունելութիւնը, որը պարզ նշան է այն զգացմունքների, որ տածում է հայ ժողովուրդը դէպի Հայրապետութիւնը: Երկար կուզէի խօսել տաճկահայերի մասին, որոնց ազատութեան ժամը արդէն հասել է, սակայն այդ անկարող եմ անել սաստիկ յոգնած լինելուս պատճառով: Աւելի երկար կը խօսեմ յետոյ»:

Եկեղեցուց դուրս գալով Վեհափառ Կաթողիկոսն ժողովրդի անվերջ կեցցէներով բարձրացաւ առաջնորդարանի դահլիճը, որտեղ Նորին Սրբութեան կողին ողջունեցին էկզարխի պատգամա-

ւորները, կոյսերը և ազգայինք:

Ժամը 3-ին Թիֆլիսի նահանգապետն այցելեց Վեհափառին, իսկ ժամը 4-ին Նորին Սրբութիւնը այցելել է Կովկասի Փոխարքայ կոմս Վարանցով Դաշկովին և մամուսուն, որքեղ թէյով հիւրասիրուեց և ապա Վրաստանի էկզարխ Պիտիրիմ արքեպիսկոպոսին, որ և անմիջապէս փոխ այցելութեան եկաւ երկու եպիսկոպոսաց հետ:

Նոյեմբերի 25-ին ժամը 2-ին Վեհափառ Կաթողիկոսին այցելել են Կովկասի Փոխարքայի գինուորական մասի օգնական Միշլայակի և քաղաքական մասի օգնական Պետրսոն: Վեհափառը այցելել է Տ. Փոխարքայի օգնականներին:

Հետզհետէ Վեհափառ Կաթողիկոսին այցելել են Թիֆլիսի հայոց միջնակարգ և ծխական դպրոցների հոգաբարձուները, ուսուցիչները, քահանայական դասը, եկեղեցիների երէցփոխները, հայ վաճառականները, վաճառականապետ Միլեանի գլխաւորութեամբ, արհեստաւորաց դասակարգերը, թերթերի խմբագիրները և հայ հասարակութեան բոլոր խաւերի ու Աստուածահաճոյ հաստատութեանց ներկայացուցիչները: Այդ բոլոր այցելութիւնները եղել են արտակարգ ոգևորութեամբ և բոլորն էլ ստանալով Վեհափառի օրհնութիւնը և զգացումներով լի խօսքերը՝ հեռացել են գոհ սրտով:

Վեհափ. Կաթողիկոսը նոյեմբերի 27-ին այցելել է Կ. Հ. Բ. Ընկերութեան հիւանդանոցը: Վեհափառին ընդունեց ընկերութեան նախագահ Ս. Յարութիւնեանը: Ընդունելութեան ներկայ էին բարեգործական ընկ. խորհրդի, պատերազմից ֆլաստլաձմներին օգնող Հայկական կենդրոնական կոմիտետի, կանանց կոմիտետի անդամները, Հայկական մի քանի ընկերութիւնների և մամուլի ներկայացուցիչները ու պատուաւոր հիւրերը: Վեհափառ Հայրապետը մի ժամ մնաց հիւանդանոցում, շրջեց բոլոր սենեակները և զրուցեց հիւանդների հետ, բաժանելով Աւետարան: Վերջում Վեհափառին հիւրասիրեցին թէյով, որից յետոյ Վեհափառն գոհ սրտով հեռացաւ հիւանդանոցից:

Դեկտ. 2-ին ժամը 5-ին Վեհափառն այցելեց վաճառականական հիւանդանոցը: Մուտքի մօտ Նորին Սրբութեան դիմաւորեցին վաճառականների աւագը, կանանց կոմիտետի անդամները և հիւանդանոցի բժիշկները: Կաթողիկոսը շրջեց հիւանդանոցի սենեակները, զրուցեց վիրաւորների հետ և նուիրեց նրանց Աւետարաններ:

Վեհափառին հիւրասիրեցին թէյով, որից յետոյ ստորագրելով պատուաւոր այցելունների գրքի մէջ՝ մեկնեց հիւանդանոցից:

Դեկտ. 4-ին Վեհափառ Կաթողիկոսն այցելեց Ներսիսեան

դպրանոցը: Վեհափառին ընդունեցին հոգաբարձութիւնը, մանկավարժական կազմը և աշակերտութիւնը կեցցէններով: Դպրոցի երգեցիկ խումբը դահլիճում Վեհափառի ներկայութեամբ երգեց մի քանի հոգևոր երգեր: Վերաւանսուչ Յ. Սունունցի քաղաքայութեան պատճառով տեսուչ Ա. Աբեղիանը մի համառօտ զեկուցումն տուաւ դպրոցի ուսումնական մասի վերաբերեալ: Ապա խօսել է Վեհափառ Հայրապետը՝ շեշտելով՝ որ դպրոցի դասաւանդութիւնը այսուհետև լինելով նոր ծրագրով, պէտք է սաներին դաստիարակէ ազգային և կրօնական ոգով, որոնք կեանքի մէջ պէտք է նպաստեն մայրենի լեզուի և գրականութեան զարգացմանը: Դպրոցի շէնքը շրջագայելուց յետոյ՝ Վեհափառին հիւրասիրեցին թէյով և նախաճաշով: Ներսիսեան դպրոցից Վեհափառը զիմեց Սուղբերի հիւանդանոցը, որտեղ շրջագայեց բոլոր սենեակները, զրուցեց վիրաւորներին հետ և Աւետարաններ պարզեց նրանց: Հիւանդանոցում Վեհափառին հիւրասիրեցին թէյով, որից յետոյ Վեհափառը ստորագրելով հիւանդանոցի պատուաւոր հիւրերի զբքում, վերադարձաւ վեհարան:

Վեհափառ Հայրապետն այցելել է նաև Յովնանեան և Կայիանեան դպրոցները, որտեղ այդ դպրոցների հոգաբարձութիւնը, ուսուցչական խումբն և աշակերտութիւնները խանդավառ ընդունելութիւն են ցոյց տուել Նորին Սրբութեան, զիմաւորելով երգերով և կեցցէններով:

Դեկտ. 7-ին, ցերեկուայ ժամը 1—3 ներսիսեան Դպրոցի նոր փառաւոր շինութեան մէջ Թիֆլիսի հայ հասարակութիւնը հանդիսաւոր հիւրասիրութիւն է ցոյց տուել իրենց սիրեցեալ Վեհափառ Տ. Տ. Գէորգ Ե. Կաթողիկոսին: Ժամը 1-ին արդէն ներսիսեան դպրոցում Թիֆլիսի երկսեռ բազմաթիւ ընտիր հասարակութիւնը սպասում էր իրենց Մեծ Հիւրին: Ժամը 1-ից քիչ անց ժամանեց Նորին Վեհափառութիւնը և դպրոցի մուտքում Նորան զիմաւորեցին հոգաբարձուները, հոգևորականները և կարգադիր մասնաժողովի անդամները: Դահլիճը մտնելիս երգեցիկ խումբը երգեց «Մեր Հայրենիք» երգը: Ապա թեմի առաջնորդ Տ. Մհերոսկ եպիսկոպոսն զիմեց Վեհափառին և հայ հասարակութեան կողմից ողջունեց ազգընտիր Կաթողիկոսի մուտքը Թիֆլիս մի այնպիսի պատմական ժամանակ, երբ Նորին Կայսերական Մեծութիւն Ռուսաց Թագաւոր Կայսրն ժամանեց Կովկաս, այցելելու Թիւրքիայի դէմ պատերազմող քաջարի զօրքը, և երջանիկ համարեց հայ ժողովուրդը, որ մի այդպիսի բոսէին Ամենայն Հայոց Կաթողիկոսը առիթ ունեցաւ մատուցանել Նորին Մեծութեանը հայ ժողովրդի հաւատարիմ հպատակութեան և անձնուիրութեան ջերմ զգացմունքները և ցանկութիւնները: Ապա վերջացնելով խօսքը՝ խնդրեց Վեհափառից օրհնել հայ ժողովրդին, որ այսօր բուռն կերպով իւր

յարգանքն է մատուցանում իւր սիրեցեալ Հովուապետին:

Նորին Արքութիւնը պատասխանելով հաղորդեց թագաւոր Կայսրի մօտ իւր ունեցած Բարձրագոյն ունկընդրութեան և այդ ունկընդրութիւնից ստացած քաղցր ապաւորութեան մասին, ապա Վեհափառն մաղթեց երկար կեանք թագաւոր Կայսրին Օգոստափառ րևիանիիին և աշողութիւն ոուս քաջարի զէնքին:

Երգեցիկ խումբը երգեց «Боже, Царя храни» երեք անգամ և դահլիճը զգրդաց ծափահարութիւններով ու «Կեցցէ թագաւոր Կայսրը» բացականչութիւններով:

Ապա Վեհափառը շարունակելով խօսքը յայտնեց, որ այցելել է ազգային երեք մեծ կրթական հաստատութիւնները՝ Ներսիսեան, Յովնանեան և Գայիանեան դպրոցները և զո՛հ է մնացել, օրհնեց հանգուցեալ Ալ. Մանթաշեանի յիշատակը, որ կառուցել է Ներսիսեան դպրոցի հոյակապ շինութիւնը, օրհնեց նրա որդի Լևոնին, որ հօր շաւղով է գնում բարեգործութեան մէջ և որ վերջինս յանձն է առել կառուցանել Գայիանեան դպրոցի համար նոր շինութիւն, ապա յորդորեց հասարակութեան՝ հոգ տանել պահպանել Գայիանեան դպրոցի գոյութիւնը, քանի որ միւս երկու դպրոցները արդէն ապահովուած է և այդ դպրոցների հոգաբարձութիւնները առանձին նեղութիւն չունեն կրելու, մինչ Գայիանեան դպրոցի հոգաբարձութիւնը մեծ ջանքեր է գործ դնում դպրոցի նիւթականը հոգալու համար: Տ. Մեսրոպ եպիսկոպոսը նորից առաջ է գալիս և մաղթում երկար կեանք և աշողութիւն հայ ժողովրդի սիրեցեալ և ազգընտիր Հայրապետին: Երգեցիկ խումբը երգեց «Տէր, կեցո՛ւ զՀայս» երգը և դահլիճը թնդաց «Կեցցէ Վեհափառը» աղաղակներով: Ապա Վեհափառը բարեմաղթեց առողջութիւն և երկար կեանք Տ. Փոխարքայ կոմս Վարանցով Դաշկովին:

Այնուհետև Վեհափառին և իւր շքախմբին հիւրասիրեցին թէյով, սուրճով և նախաճաշիկով: Ժամը 3-ին Վեհափառը ներկայ եղողների ուրախ և զգացմունքներով լի կեցցէներով մեկնեց դէպի վեհարան:

Նոյն օրը, դեկտեմբերի 7-ին, երեկոյեան ժամը 10-ի զնացքով Վեհափառը մեկնեց ս. Էջմիածին: Ժամը 9-ին առաջնորդարանում հաւաքուել էին քահանայական գասը և հասարակութեան զանազան խաւերի ներկայացուցիչները: Երբ Վեհափառը դուրս եկաւ դահլիճից՝ սանդուխքների վրայ Վեհափառին դիմաւորեցին հայ կամաւորները կեցցէներով: Բազմաթիւ ժողովուրդ և հոգևորական գասը խանդավառ ոգևորութեամբ կեցցէներով բարի ճանապարհ մաղթեցին Վեհափառին: Բազմաթիւ անձինք կայարան էին զնացել ողջերթ մաղթելու Նորին Վեհափառութեան,

ի թիւս այլոց և ոստիկանապետը՝ Վեհափառը օրհնելով ամէն-  
քին մտաւ սալօն վագօնը: Գնացքը մեկնեց ժամը 10-ից 20 ըսպէ  
անց հայ ժողովրդի անվերջ կիցցէնների խանդավառ ձայնով: Վեհա-  
փառին ուղեկցում էին Տ. Բագրատ եպիսկոպոսը, Տ. Տ. Արսէն և  
Արիստակէս վարդապետները: Առանձին պատգամաւորութիւն հայ  
հասարակութեան կողմից կամեցել է Վեհին ճանապարհել մինչև  
Էջմիածին, բայց Վեհափառը չէ կամեցել նրանց նեղութիւն պատ-  
ճառել: Թէ գնալիս և թէ վերադառնալիս բոլոր կայարաններում՝  
մանաւանդ Մեծ Ղարաքիլիսայի և Աղէքսանդրապօլի կայարան-  
ներում, ժողովուրդը դիմաւորել է և ճանապարհել իրենց Հայրա-  
պետին մեծ ոգևորութեամբ: Գնացքը հասաւ Էջմիածնի կայա-  
րան լոյս երեքշաբթի առաւօտեան ժամը 4-ին դեկտ. 9-ին: Ս. Էջ-  
միածնից Վեհափառին դիմաւորելու էին զնացել Սինօզի անդամներ  
Տ. Մատթէոս եպիսկոպոս և Տ. Բարդէն վարդապետ, նոյնպէս և  
կայարան էին գնացել հայրապետական խաչ ու գաւազան կրելու  
համար Տ. Վրթանէս վարդապետը և Տ. Թադէոս արեղան:

Ժամը 9-ին ս. Էջմիածնում Վեհափառին դիմաւորեցին ամ-  
բողջ միաբանութիւնը՝ ձեմարանի աշակերտութիւնը Տեսչի գլխա-  
ւորութեամբ և բազմաթիւ ժողովուրդ: Վեհափառը միաբանութեան  
ուղեկցութեամբ մտնելով Տաճար՝ ծնկաչոք աղօթեց Իշման ս. Սե-  
ղանի առաջ և ապա վերադառնալով՝ բարեհաճեց բարձրանալ  
Վեհարան:

Նորին Վեհափառութեան հեռագրական հրամանի հա-  
մաձայն նոյեմբերի 29-ին Աղէքսանդրապօլ ճանապարհուեց  
Սինօզի նախանդամ Տ. Յուսիկ արքեպիսկոպոսը դիմաւո-  
րելու Նորին Կայսերական Մեծութեան Թագաւոր Կայսեր:  
Տ. Յուսիկ արքեպիսկոպոսը բախտ է ունեցել Աղէքսան-  
դրապօլ քաղաքի կայարանում դեկտ. 1-ին քաղաքի ներ-  
կայացուցիչների և Երևանի նահանգապետի հետ միասին  
ներկայանալ Թագաւոր Կայսեր:

